



«Նոյ ժամանակի
կրթունքն է» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Ընտանիքի հոգեբանություն,
կոնֆլիկտներ

Առարկան՝

Հայոց լեզու, գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝

Ասատրյան Սիլվա Ա.

Ուսումնական հաստատություն՝

Ռ.Արաջյանի անվան № 147
հիմնական դպրոց

Երևան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եթե դուք պարզապես գրուցեք ձեր երեխաների հետ, ապա կարող եք նրանց կյանքը սովորական ձևով ուղղորդել: Իսկ եթե հմտորեն ու ճիշտ գրուցեք, ապա կարող եք օգնել նրանց՝ կառուցելու իրենց երազանքը ապագայում:

Ջիմ Ռոն

Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությամբ է պայմանավորվում մարդկային հասարակության անվտանգությունը:

Ադելեր

Յուրաքանչյուր մանկավարժի գերագույն նպատակն է նպաստել սովորողների կյանքն ավելի լավը դարձնելուն, իր ուզած ձևով ուղղորդելուն:

Տարիներ շարունակ հետամուտ եմ եղել երեխաներին սովորեցնել.

- հաղթահարել ցանկացած դժվարություն
- ազատվել բացասական մտքերից՝ փոխարինելով դրականի
- հավատալ ինքն իրեն և իր ուժերին
- բարձրացնել ինքնագնահատականը
- բարելավել կրթական մակարդակը
- գտնել կյանքում հաջողության իր բանալին
- կերտել իր ապագան, ապրել արժանավայել կյանքով:

Փորձել եմ վերլուծության ենթարկել ընտանիքի հոգեբանության մի քանի առանցքային հարցեր, անդրադարձել եմ ներընտանեկան կառուցվածքային հարաբերությունների և բախումների, ամուսնալուծության հիմախնդիրներին: Կարևորել եմ հարցի արդիականությունը և գիտականությունը: Հետազատական աշխատանքը կօգնի ինձ՝ արդյունավետ կողմնորոշվելու ընտանեկան հարաբերություններում և կանխելու վերահաս լարվածություններն ու բախումները:

Մարդու հաջողության ակունքը մանկությունն է, իսկ յուրաքանչյուր ծնողի գերագույն նպատակն է դաստիարակությամբ ապահովել երեխայի հետագա առողջությունը, հաջողությունն ու երջանիկ կյանքը:

Իմ երկարամյա մանկավարժական աշխատանքում եկել եմ այն համոզման, որ գիտություններից թեևս ամենադժվարը մարդագիտությունն է: Շարունակաբար պետք է պարզել «մարդու ուղեղի զարմանահրաշ առեղծվածը», վերստին ծանոթանալ «մտքի ու խոսքի հրաշագործ ուժի» անսահման հնարավորություններին, ծնողի ու երեխայի ինքնաձանաչողության գաղտնիքներին:

Ընտանիքի հոգեբանություն

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից:

Ընտանիքի հոգեբանությունը հոգեբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է ամուսնության և ընտանեկան հարաբերությունների էվոլյուցիան ու բնույթը, նրանց առաջացման յուրահատկությունները, ձևավորումը, կայունացումն ու քայքայումը՝ նկարագրելով ընտանեկան և ամուսնական հատկանիշների, ընտանիքի անդամների սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները միմյանց հետ:

Ընտանիքը անձի սոցիալականացման կարևորագույն ինստիտուտն է: Հենց ընտանիքում է մարդն ստանում սոցիալական փոխգործակցության առաջին փորձը: Այնուհետև երեխայի կյանում ներառվում են այնպիսի սոցիալական ինստիտուտներ, ինչպիսիք են մանկապարտեզը, դպրոցը փողոցը: Սակայն այդ ժամանակ էլ ընտանիքը մնում է անձի սոցիալականացման կարևորագույն, իսկ երբեմն էլ ամենակարևոր գործոնը:

Յուրաքանչյուր մարդ, դառնալով չափահաս և ինքնուրույն, ցանկություն է ունենում ստեղծելու իր ընտանիքը, ունենալու իր սեփական անկյունն ու երեխաները: Դպրոցի ավարտական դասարանի յուրաքանչյուր պատանի կամ աղջիկ արդեն խորհում է իր ապագա ընտանիքի մասին: Նրանք հասուն մարդու հայացքով փորձում են գնահատել իրենց ընտանիքում գոյություն ունեցող փոփոխությունները:

Ամեն ոք պետք է իրազեկ լինի ընտանիքի, ընտանեկան կյանքի հոգեբանական հիմնահարցերին: Ժողովրդական ասույթն ասում է. «ընտանիքը դաստիարակության ամենամեծ համալսարանն է» (Ա.Նալչաջյան, Ս.Մկրտչյան, Ընտանեկան հոգեբանություն):

Ընտանիքը սոցիալական խումբ է, որը կազմված է ծնողներից, նրանց զավակներից և այլ հարազատներից: Այն բոլոր ժողովուրդների կյանքում անցել է զարգացման երկարատև ճանապարհ: Ընտանիքի կյանքի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է:

Ընտանիքը պետք է դիտարկել իր անդամների որոշակի կարգավիճակների ու դերերի համակարգ, պետք է ցույց տալ, թե ընտանիքում անհատների դերերն ու դերային փոխհարաբերություններն ինչպես են փոխադրվում հասարակության ավելի լայն միջավայր:

Կա փոխադրման եկու տեսակ.

ա) դրական (պոզիտիվ), որի դեպքում հիշյալ դերային հարաբերություններն ու ըմբռնումները պահպանվում են նույնությամբ:

բ) բացասական (նեգատիվ), որի դեպքումը փոխհարաբերությունների ձևերը փոխարինվում են իրենց հակոտնյաներով:

Ընտանիքի՝ որպես սոցիալական փոքր խմբի ուսումնասիրությունը ժամանակակից հոգեբանության համար առաջնային նշանակություն ունի: Ընտանիքն այնպիսի սոցիալական խումբ է, որի մեջ գերակշռում են անմիջական, հուզականորեն հագեցած հարաբերությունները: Այնտեղ ընդունված արժեքներն ու վարքի կանոնները ուղեցույց են յուրաքանչյուր անդամի համար: Նրանցից ամեն մեկն ստանում է այս կամ այն չափով որոշակի դիրք, կարգավիճակ, որը նա պետք է իրականացնի: Այսինքն՝ խմբի կազմում յուրաքանչյուր անդամի դերը նրա կողմից իր գրաված դիրքի իրազորման է: Ընտանիքն այն առաջնային միջավայրն է, որտեղ զարգացող նոր անձը՝ երեխան, ըմբռնում է, թե ինչ և ինչպիսին են մարդկային փոխհարաբերությունները, և ինչպես կարելի է լուծել դրանցում ծագող խնդիրներն ու կոնֆլիկտները:

Քանի որ ընտանիքը կազմված է տարիքային տարբեր խմբերի անձանցից, ապա երեխան, փորձելով կողմնորոշվել և հաստատվել հարաբերությունների բազմաբնույթ դաշտում, իմանում է, թե ինչպես պետք է վարվել տարիքով ավելի մեծերի, հասակակիցների և կրտսերների հետ: Դա հնարավորություն է

տալիս հետագայում ճիշտ կողմնորոշվելու լայն հասարակության մեջ: Յուրաքանչյուր զարգացող անհատ հենց ընտանիքում է ձեռք բերում իր սկզբնական և կարևոր սոցիալական հմտությունները, այնտեղ է ձևավորվում նրա անհատական արժեքային համակարգը:

Ընտանիքի հոգեբանության բնագավառում քննարկվող հիմնական հարցերից մեկը հասարակության մեջ ընտանիքի գործառույթների խնդիրն է (ներքին, արտաքին և երկակի):

Ներքին գործառույթները ծառայում են երկու հիմնական նպատակի.

ա) իր՝ որպես սոցիալական խմբի պահպանմանն ու ամրապնդմանը,

բ) իր անդամների պահանջմունքների բավարարմանը:

Ընտանիքի արտաքին գործառույթները ծագում են տվյալ ընտանիքի՝ այլ ընտանիքիների և ավելի լայն հասարակության հետ ունեցած հարաբերություններում:

Կան նաև ընտանիքի այնպիսի գործառույթներ, որոնք միաժամանակ և՛ արտաքին են, և՛ ներքին: Դրանք երկակի գործառույթներ են: Երկակի գործառույթի օրինակ է մանկածնությունը, որի նշանակությունը մեծ է և՛ ծնողների, և՛ հասարակության ու պետության համար: Երկակի գործառույթի օրինակ է նաև երեխաների դերային սոցիալականացման գործառույթը, որի իրագործման շնորհիվ երեխան սովորում է ոչ միայն ներընտանեկան դերեր կատարել, այլև նախապատրաստվում է հասարակության մեջ իր ապագա դերերի կատարմանը, ինչպիսիք են տղամարդու և կնոջ, ամուսինների, տարբեր մասնագիտական դերերը:

Մեծ է ընտանիքի տեղն ու դերը հասարակության զարգացման, նրա արժեքների ստեղծման գործում: Ընտանիքի և հասարակության հետ կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման համար:

Յուրաքանչյուր ընտանիք հասարակության մեջ ունի իր կարգավիճակն ու համապատասխան դերը: Ընտանիքի՝ որպես սոցիալական միասնական համակարգի դերի մեջ մտնում են այն սպասումները, որ նրան ներկայացնում է հասարակությունը.

ա) նյութական, տնտեսական և կենցաղային գործառույթ, երբ ընտանիքի անդամները միասին որևէ արտադրություն կամ բիզնես են կազմակերպում:

բ) վերարտադրական գործառույթ, երբ երեխաները, լույս աշխարհ գալով, ապահովում են հասարակության շարունակական գոյությունը:

զ) ընտանիքի դաստիարակչական գործառույթ, որ ընտանիքում երեխաները պետք է դաստիարակվեն որպես հոգեպես առողջ և հասարակության համար պիտանի մարդիկ:

դ) Ընտանիքի հաղորդակցական գործառույթ, որն ապահովում է ոչ միայն իր անդամների ներքին մտերմիկ, սերտ հաղորդակցությունը միմյանց հետ, այլև ստեղծում է միջընտանեկան հաղորդակցություն, որը լայն հասարակության և պետության հետ ընտանիքի կապվելու կարևոր և անհրաժեշտ ուղիներից մեկն է:

Որքան ավելի ակտիվ է ընտանիքի ներքին հաղորդակցումը, այնքան պասիվ է նրա արտաքին հաղորդակցումը: Այլ կերպ ասած՝ ներընտանեկան եսասիրությունը ընտանիքը դարձնում է ավելի համախմբված, որը կարող է հասարակության վրա բացասական ազդեցություն գործել:

Ընտանիքի հոգեբանության մեջ կարևորվում է նաև ներընտանեկան մարդկային փոխհարաբերությունները, որոնք լինում են առաջնային և երկրորդային:

Առաջնային հարաբերությունները ընտանիքի անդամների անմիջական «դեմ առ դեմ» հարաբերություններն են, որոնք հաճախակի են, կրկնվող, ինտենսիվ: Երկրորդային հարաբերությունները մարդկանց միջև ծագող պաշտոնական հարաբերություններն են, որոնք հուզականորեն ավելի աղքատ են, անմիջականությունը բացակայում է:

Ընտանիքի համերաշխության գրավականներն են մտերմությունը, համագործակցությունն ու փոխօգնությունը, փոխըմբռնումը:

Ընտանիքի դինամիկայի համար մեծ նշանակություն ունի, թե քանի անձից է այն բաղկացած, ովքեր են անդամները: Ըստ այդմ՝ ընտանիքը լինում է՝

- 1) պարզ կամ բջջային, որի անդամները ամուսիններն են և նրանց հարազատ երեխաները: Այս ընտանիքներն ապրում են ազգականներից առանձին, ինքնուրույն են լուծում իրենց առաջ ծառայած խնդիրները: Եթե ընտանիքում դեռ երեխաներ չկան, ամուսինների դերակատարումները փոխկապակցված են, իսկ երբ երեխա է ծնվում, ապա ընտանիքում ծագում են նոր դերային հարաբերություններ՝

ա) մայր-երեխա, բ) հայր –երեխա:

Երեխան դառնում է միջնորդավորող օղակ ծնողների փոխհարաբերություններում: Արդեն եռյակը՝ որպես բջջային ընտանիքի տարբերակ, դառնում է բավականին բարդ սոցիալ-հոգեբանական համակարգ: Ընտանիքի ներքին կապերն ավելի են թուլանում, երբ ծնվում են երկրորդ, երրորդ և հաջորդ երեխաներն իրենց ուրույն անհատականությամբ:

Հոգեբանները նշել են բջջային ընտանիքի որոշ թերություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ընտանիքի ամրության, պահպանման, երեխաների լիարժեք դաստիարակության վրա, հանգեցնում են ընտանիքի անդամների միջև կապերի թուլացման: Դրանցից են ծնողական դերերի վրա արտաքին վերահսկողության թուլությունը, ֆինանսական միջոցների համեստ չափերը և այլն, որոնք հաճախ ընտանիքների քայքայման, ամուսնալուծությունների պատճառ են դառնում:

- 2) Ոչ լրիվ ընտանիքը բջջային ընտանիքի այն տեսակն է, որտեղ ծնողներից մեկը բացակայում է ամուսնալուծության կամ էլ մահվան պատճառով: Դժվար չէ նկատել, թե ընտանիքի հոր բացակայության հետևանքով ինչպիսի էական փոփոխություններ են կատարվում ընտանիքում. կրճատվում է ներընտանեկան դերերի և դրանց միջև կապերի թիվը, լիդերության և մյուս գործընթացները դառնում են ավելի միակողմանի և շատ հաճախ նաև ոչ լիարժեք: Երևույթը բացասաբար է ազդում երեխաների վրա, նրանք մեծանում են ձևական, բովանդակային առումով ավելի պարզ սոցիալ-հոգեբանական միջավայրում:

Պետք է հաշվի առնել, որ ընտանիքում հոր կարգավիճակը հոգեբանական տեսակետից խորհրդապաշտական գործառույթ է կատարում: Հոր կերպարը համամարդկային արժեք ունեցող խորհրդանիշ է, և դրա խեղաթյուրումը ընտանիքի ներսում հանգեցնում է հոգեբանական լուրջ խախտումների: Հատկապես դժվար է տղաների համար. նրանք իրենց թույլ ու անպաշտպան են զգում շրջապատում:

- 3) Ընդլայնված կամ բարդ ընտանիք, որի կազմում կան երկուսից ավելի սերունդների ներկայացուցիչներ, այսինքն՝ երբ ընտանիքում բացի ծնողներից և երեխաներից, ապրում են նաև երեխաների պապն ու տատը, որոնք ունեն համապատասխան կարգավիճակներ և դերեր: Այնտեղ առաջանում են նոր տիպի կապեր՝ պապ-թոռներ և տատ-թոռներ, և նոր տիպի հարաբերություններ՝ սկեսրայր- հարս, սկեսուր-հարս:

Ընդլայնված ընտանիքում փոխադարձ վերահսկողության գոյության հետևանքով ընտանիքի անդամներն ավելի զուսպ են լինում իրենց վարքում, հուզական դրսևորումներում, կշռադատում են իրենց խոսքը, վարքն ու դրանց հետևանքները՝ ձգտելով այնպես կատարել իրենց դերը, ինչպես ընդունված է տվյալ միջավայրում: Այլ կերպ ասած՝ ընտանիքի անդամները ցուցաբերում են հարմարվողականություն, որն ավելի է ուժեղանում և դառնում է փոխադարձ համակերպման առաջատար գործոններից մեկը:

Ընդլայնված ընտանիքում ապրելն ունի իր ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը: Այսօր, անշուշտ, երիտասարդ ամուսնական զույգերը ձգտում են լինել անկախ և ինքնուրույն: Այդ պատճառով հեռանում են ընդլայնված ընտանիքներից, կամ էլ հենց սկզբից խուսափում են դրանցում ներգրավվելուց:

Ժամանակակից հոգեբանները գտնում են, որ ընդլայնված ընտանիքում երիտասարդ զույգերի համար ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական տարածքը փոքր է, նրանք մեծ ընտանիքում իրենց ճնշված են զգում, որը թույլ չի տալիս, որպեսզի ամուսինները անհրաժեշտ չափով հարմարվեն միմյանց: Ի վերջո, ընդլայնված ընտանիքում յուրաքանչյուր անդամի վրա շատ անգամ ավելի մեծ է սոցիալական վերահսկողությունը: Սա նշանակում է ինչ-որ չափով վերահսկողի ենթակայության տակ լինել և ամեն քայլի համար հաշվետու լինել շատ մարդկանց, փեկուզ և նրանք իրենց հարազատներն են: Ահա թե ինչու են շատերը ձգտում ազատվել այդ ազդեցությունից և ապրել ազատ ու ինքնուրույն կյանքով:

4) Մեծ ընտանիքը հաճախ անվանում են նաև նահապետական ընտանիք: Այդպիսի ընտանիքներում լինում են ծնողական զույգեր և նրանց զավակներն իրենց ընտանիքներով: Այդ ընտանիքում հայրը կամ պապը կատարում է այն դերը, ինչ որ հնում կատարում էին «նահապետները»: Ժամանակակից քաղաքակիրթ երկրներում նման ընտանիքների թիվը շատ փոքր է:

Մեր օրերի հայ ընտանիքները հիմնականում հավաք ընտանիքներ են, թեև դրանց շատ անդամներ՝ հատկապես տղամարդիկ, մեկնել են տարբեր երկրներ՝ ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով:

Ըստ կառավարման ոճի լինում են ընտանիքի երկու տեսակ՝ ավտորիտար և ժողովրդավարական:

Ավտորիտար ոճով կառավարվող ընտանիքներում ավտորիտար անձի համար կարևորը իշխանությունն է, նա հակված է միայնակ որոշումներ կայացնել, պահանջում է, որ ընտանիքի անդամներն անվերապահորեն ենթարկվեն իրեն, իրեն է վերապահում հիմնական որոշումներն ընդունելու իրավունքը: Նա հայրիշխանության կողմնակից է, վերահսկում է մյուսների վարքը, տանել չի կարողանում առարկությունը: Պատմության ընթացքում եղել է նման ընտանիքի երկու ենթատեսակ՝ հայրիշխանական և մայրիշխանական, որից հիմնականում հանդիպում են հայրիշխանական ավտորիտար ընտանիքներ:

Ժողովրդավարական (եգալիտար) ընտանիքը մենամուսնական ընտանիքի նորագույն տարբերակն է, որը հավասար իրավունքներ ունեցող տղամարդու և կնոջ միությունն է, որտեղ առկա են ոչ թե դեկավար-ենթակա տիպի հարաբերություններ, այլ ամուսինների փոխադարձ հարգանքի, ընդհանուր արժեքային կողմնորոշումների վրա հիմնված հարաբերություններ: Այնտեղ գերակայում են առաջնային սոցիալ-հոգեբանական հարաբերությունները:

Ժողովրդավարական ընտանիքներում ամուսինների դերերն իրենց բովանդակությամբ էապես տարբերվում են նախորդ բոլոր տեսակի ընտանիքներում տղամարդու և կնոջ դերերից: Այստեղ ամուսնու և կնոջ ներընտանեկան դերերը մեծապես նման են իրար, սիմետրիկ են և ունեն հետևյալ առանձնահատկությունները.

- ա) հիմնված են հավասարության և արդարության սկզբունքների վրա,
- բ) ունեն մեծաթիվ միանման սպասումներ,
- գ) հակադիր սպասումների թիվը ավելի փոքր է,
- դ) քանի որ նման ընտանիքները կազմվում են ազատ ընտրության հիման վրա, ապա կարող են ազատ ընտրությամբ էլ լուծարվել, որովհետև նրանց վրա հասարակության և ազգականների հսկողությունը թույլ է: Նման դեպքում ամուսնալուծության հետ կապված լուրջ խնդիրներ են առաջանում նաև երեխաների խնամքի, սոցիալականացման և հոգեկան առողջության ապահովման առումով:

Եթե ընտանիքում գերիշխողը չափավոր առաջնային հարաբերություններն են, ապա այն լինում է համերաշխ, նպաստում է իր անդամների հոգեկան առողջացմանն ու զարգացմանը:

Ժողովրդավարական ընտանիքներում (հատկապես մտավորականության խավի ընտանիքներում) դեռևս վաղ մանկության տարիքում գտնվող երեխային անձ են համարում: Հավասար հարաբերություններ են հաստատվում ընտանիքի բոլոր անդամների միջև: Երեխաներն ունենում են ոչ միայն պարտականություններ, այլև իրավունքներ, հաշվի են առնվում նրանց կարծիքները: Ծնողները հանդես են գալիս որպես երեխայի ավագ ընկերներ, ֆիզիկական պատիժներ չեն կիրառվում, որովհետև դրանք նսեմացնում են երեխայի արժանապատվությունը, որը կարող է նպաստել թերարժեքություն ունեցող անհատի ձևավորմանը: Երեխաները նման ընտանիքներում բարձրագույն արժեքներ են, ծնողները շատ ժամանակ են հատկացնում նրանց, ծանոթացնում նաև մեծերին հուզող խնդիրներին: Մեծ նշանակություն է տրվում երեխաների անհատականության, նրանց բնածին օժտվածության և տաղանդների զարգացմանը, որը պայմանավորված է ծնողների՝ երեխաների տաղանդի, օժտվածության, գիտելիքների և հմտությունների վերաբերյալ որոշակի հոգեբանական գիտելիքներ ունենալով: Այնուամենայնիվ, երբեմն շատ երեխաներ ունեցող ընտանիքներում ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ տարբեր է լինում: Նկատելի է, որ ավագներին մեծ տեղ են տալիս, հարգում են, իսկ փոքրերին երես են տալիս: Միջին տարիքի երեխաները, որոնց կարծես «մոռանում են», հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Խոսելով ընտանիքի տեսակների մասին՝ հոգեբաններն առանձնացնում են նաև, այսպես կոչված, «երեխակենտրոն» ընտանիքները, որտեղ հիմնականում մեկ երեխա է մեծանում: Գլխավոր անձը երեխան է համարվում, որը և հաճախ ընտանեկան բռնակալ է դառնում: Նման երեխան չի ենթարկվում ծնողներին, անկախ կյանք է վարում, իր իշխանության տակ է պահում ծնողներին և ինքնաբերաբար ավտորիտար մեթոդներ է կիրառում:

Ենթադրվում է, որ այդպիսի ընտանիքում եղել է դաստիարակչական ոճի բացակայություն, բարձիթողի վիճակ, ծայրահեղ ազատականություն կամ երեխայի նկատմամբ չափից ավելի հոգատարություն և ուշադրություն, որն այլ կերպ անվանում են ծնողական «կույր սեր»:

Ընտանիք և հասարակություն. «Ընտանիքը հասարակության բջիջն է», - ասել է Արիստոտելը: Ընտանիքում տիրող մթնոլորտը լիովին հասկանալու

համար պետք է նկատի ունենալ, որ այն սոցիալ-հոգեբանական կառույց է, որը կղզիացած չէ հասարակությունից, գտնվում է հասարակական կյանքի բովում և իր վրա կրում է դրան բնորոշ բոլոր փոփոխություններն ու հոգեբանական ազդեցությունները:

Ինչպես արդեն նշեցինք, այն բնութագրվում է որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով:

Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Հետևաբար, հասարակությունը և պետությունը կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Առողջ է այն ընտանիքը, որն ունի նորմալ կառուցվածք և կարողանում է լիարժեք կերպով կատարել իր ներընտանեկան, միջընտանեկան և հասարակական գործառույթները: Առողջ ընտանիքում փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե՛ ամուսինների, թե՛ ծնողների ու երեխաների միջև:

Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորույթների, մշակույթի, դաստիարակության և բազմաթիվ այլ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Կայուն ու ամուր ընտանիքը ազգի գոյապահպանման հիմքն է: Հետևաբար ժողովրդավարական ընտանիքների ազդեցության տակ հասարակությունը ևս պետք է զարգանա դեպի ժողովրդավարություն, որտեղ անձի իրավունքներն առաջնային են, որն էլ բխում է ընտանիքի և հասարակության նկատմամբ ստանձնած պարտականություններից:

«Երեխաները երկրի բնական ծաղիկներն են,
իսկ այդ ծաղիկներն առաջին հերթին
աճեցնում են ընտանիքում՝ ծնողները»:

Մ.Գորկի

Մարդկության ծագմանն ու զարգացմանը գուզընթաց բոլոր ժամանակներում էլ ընտանիքներում ծագել ու զարգացել են կոնֆլիկտներն ու վեճերը, ուստի մարդն իր ողջ կյանքի ընթացքում չի կարող զերծ մնալ կոնֆլիկտներից ու հակասություններից: Բախումներն անկասկած խաթարում են կյանքի բնականոն ընթացքը՝ առաջացնելով լարվածություն, ցնցումներ, որոնք բացասաբար են անդրադառնում մարդու առողջության, հոգեկանի վրա: Կոնֆլիկտներն ընդգրկում են կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում նաև կրթության ոլորտը: Ուսումնասիրությունները վկայում են, որ վտանգը ոչ թե կոնֆլիկտի առաջացումն է, այլ նրա ոչ ճիշտ կառավարումն ու առաջադրած լուծումները: Կոնֆլիկտների արդյունավետ կառավարումը ենթադրում է առաջացման պատճառների բացահայտում՝ կիրառելով արդյունավետ մեթոդներ ու տեխնոլոգիաներ:

«Կոնֆլիկտ» բառը ծագել է լատիներեն *conflictus*՝ «բախում», բառից և բնութագրվում է որպես մարդկանց շահերի, նպատակների, արժեհամակարգի ընկալման տարրերով պայմանավորված անհամաձայնություն: Կոնֆլիկտները մարդկային հարաբերությունների անբաժանելի մասնիկն են, իսկ մարդկային հարաբերությունների որակից կախված է մարդկային կյանքի որակը: Կոնֆլիկտները մարդկանց կարիքների բախումն է: Յուրաքանչյուր մարդ ունի կարիքներ՝ ֆիզիոլոգիական, էմոցիոնալ, մտավոր, հոգևոր կարիքներ:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած են ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Այսպես. այն, ինչ կնոջ համար անճաշակություն է, ամուսնու համար արվեստ է, այն, ինչ ամուսնու համար գրավիչ մարզական իրադարձություն է, կինը տաղտկալի է համարում: Ժամանակի ընթացքում գնալով նրանք կորցնում են մեկը մյուսի նկատմամբ զգայուն լինելու կարողությունը, երկուսի կամքի դրսևորումները

դառնում են կոշտ ու մտացածին ենթադրությունների վրա հիմնված: Եթե նախկինում նրանք պատրաստ էին խոհեմաբար ծանրութեթն անել խնդիրը լուծելու տարբերակները, ապա արդեն սահմանափակվում են մեկ եզակի նպատակի վրա կենտրոնանալով և ամեն գնով փորձում են հասնել դրան:

Ընտանիքում անդամները ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում: Նման պարագայում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի, որի հետևանքով առաջանում են հակասություններ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ, ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակ:

Վերջին ժամանակներում ավելացել է բջջային ընտանիքների թիվը, փոխվել են ընտանիքներում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները:

Ընտանեկան կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ.

- հոգեբանական անհամատեղելիությունը
- սեռական խնդիրները
- միմյանց մտադրությունները չհասկանալը
- փոխըմբռնման բացակայությունը
- ցածր կրթամակարդակը
- ամուսիններից մեկի սոցիալական ցածրացումը
- պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը
- աշխատանքի բացակայության և ֆինանսական դժվարությունները
- կախվածությունը ծնողների ընտանիքից:

Ընտանիքն ամուր է, երբ ընտանիքի հիմքում սերն է և փոխադարձ վստահությունը;

Կոնֆլիկտներն ավելի հաճախ ծագում են ընդլայնված ընտանիքներում, քան բջջային ընտանիքներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանիքում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն (ամուսնալուծություն, ընթացիկ կոնֆլիկտներ) էապես փոխում է երեխայի վարքը, բացասաբար անդրադառնում նրա զարգացման և աշխարհայացքի ձևավորման վրա:

Գոյություն ունեն ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը: Այդպիսիք են՝

- նևորտիկ ընտանիքները, որտեղ ամուսինների մոտ նկատվում են տազնապայնության բարձր մակարդակ, ագրեսիվություն,
- ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հակված չեն փոխզիջման,
- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն, ճգնաժամային վիճակում:

Բազմաթիվ ամուսնական զույգեր հանդուրժում են բախումնային վիճակները, քանի դեռ կոնֆլիկտների մեջ ներքաշումը շատ չի խորացել, դրանք չեն հասել ճգնաժամի աստիճանի, քանի որ ճգնաժամերն ավելի էական հետևանքներ են ունենում: Հետևանքներից մեկը ամուսնալուծությունն է՝ ընտանիքի տրոհումը և վերացումը: Կոնֆլիկտները, հատկապես եթե ընտանիքում երեխաներ կան, լուրջ, խոր ու երկարատև ազդեցություն են գործում երեխաների հոգեվիճակի և վարքի վրա: Նախադպրոցական երեխաները այդ պայմաններում սարսափ են զգում, կորցնում են իրենց ինքնավստահությունը և վախկոտ են դառնում: Հաճախ նրանց թվում է, թե իրենք են ծնողների մեջ ծագած կոնֆլիկտների և ամուսնալուծության պատճառը, որի հետևանքով մեղքի զգացում են ունենում, դառնում են լուռ ու ինքնամփոփ, անուշադիր, որն էլ բացասաբար է անդրադառնում ուսման որակի վրա: Ավելի բարձր տարիքային փուլերում գտնվող երեխաները երբեմն բացահայտ արտահայտում են իրենց դժգոհությունը: Որոշ երեխաների համար ծնողների կոնֆլիկտները դառնում են սովորական երևույթ, որը և բացասաբար է ազդում նրա կյանքի հետագա զարգացման վրա: Փոխվում են ընտանիքի և ծնող-երեխա հարաբերության մասին ունեցած նրա պատկերացումները: Այս տիպի իրավիճակը հաղթահարելու համար հաճախ նույնիսկ տարիներ են պահանջվում: Հաճախակի է ծնողը կոնֆլիկտ ունենում տարբեր տարիքի երեխաների հետ, որովհետև երբեմն չի գիտակցում երեխայի տարիքային հոգեբանական առանձնահատկությունները: Հատկապես մեծ թվով տարաձայնություններ են առաջանում երեխաների դեռահասության շրջանում: Այդ տարիքում առավել կարևոր են ընտանեկան

ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը միմյանց նկատմամբ, փոխըմբռնումը:

Դեռահասն սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջում է, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի, որը, առանց բացառության, բոլոր դեռահասների ձգտումն է: Եթե ծնողները շարունակում են նրանց վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Դժվարություններ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը, ձգտելով երեխային դարձնել անթերի, օրինակելի, երբեմն կիրառում է խիստ պատժամիջոցներ, չի խրախուսում նրան: Այս դեպքում երեխան կարող է մեծանալ չարացած, ագրեսիվ կամ անվստահ ու բարդույթներով: Ընտանիքներում նկատելի են կոնֆլիկտներ երեխաների հարաբերություններում: Որպես կանոն՝ երկրորդ երեխայի ծնունդից հետո առաջնեկը զգում է ուշադրության պակաս, նրա մեջ առաջանում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, որը կարող է վերածվել ատելության ծնողի, ինչպես նաև փոքրիկի նկատմամբ: Ուստի ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ և նրա մեջ դրական վերաբերմունք ձևավորեն նորածնի հանդեպ: Հայկական ընտանիքներում սովորաբար մայրը շատ է սիրում տղա երեխային, արտոնություն է տալիս նրան, իսկ հայրը նույն կերպ է վերաբերվում աղջկան: Այս հակասական վերաբերմունքը զգալով՝ երեխան սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ:

Ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև, որի պատճառ կարող են հանդիսանալ ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, ժառանգության հարցը և այլն:

Շատ դեպքերում երեխայի դաստիարակության գործում ծագող խնդիրները պայմանավորվում են ոչ թե ընտանեկան բաժանումով, այլ ծնողների՝ չափից շատ զբաղվածությամբ: Երբեմն նրանք ինքնամոռաց նվիրվում են իրենց կարիերային, որի արդյունքում ընտանեկան անտարբերությունը ծնում է նոր կոնֆլիկտ: Երեխաների մոտ հետզհետե առաջանում են գայրույթ, տխրություն, առողջական խնդիրներ: Հատկանշական են քնի խանգարումն ու դպրոցում կենտրոնանալու դժվարությունը: Երեխան իրեն անտեսված ու լքված է զգում, կորցնում է

ինքնավստահության ու անվտանգության զգացումը, որը աստիճանաբար փոխարկվում է միջավայրի հանդեպ անտարբերության, գիտության, արվեստի, սպորտի նկատմամբ հետաքրքրասիրության կտրուկ նվազման և հետագայում կարող է արտահայտվել ագրեսիայի, նախանձի ու թշնամանքի դրսևորումներով:

Կոնֆլիկտային ընտանիքիների երեխաները խնդիրներ են ունենում միջանձնային հարաբերություններում, դժվարանում են լուծումներ գտնել և շատ անգամ էլ դրանք փնտրում են վատ միջավայրում: Նրանք ունենում են «ծանր» բնավորություն, ցածր ինքնագնահատական:

Կոնֆլիկտները լավագույնս լուծվում են հաղորդակցման մեթոդների միջոցով, որոնք օգնում են հարգանք և վստահություն հաստատել ընտանիքում: Շատ կարոր է ներընտանեկան կոնֆլիկտի հաղթահարումը համատեղ ջանքերով: Պետք է կարևորել ընտանեկան ավանդույթները: Անկախ ստեղծված իրավիճակից՝ պետք է խիստ վերահսկել երեխայի կրթությունը, ապահովել նրա առողջ ժամանցը, շփումը ընկերների հետ, կենդանիների հետ, կազմակերպել ֆիլմերի դիտում, երաժշտության ունկնդրում, ընթերցանություն, որոնք խթանում են երեխայի առողջ դաստիարակության զգացումը, բարձրացնում արժեհամակարգը: Երեխային հմտորեն ներգրավել ընտանեկան խնդրի դրական հանգուցալուծման մեջ և ապահովել ընտանիքի և նրա կայուն զարգացումը:

Ընտանեկան դաստիարակությունը շարունակական է, որի դերի բարձրացումը ավելի շատ կախված է դպրոցից: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ են համագործակցում, ինչը երեխայի կրթության վճռորոշ պայմանն է, ապա հաղթանակն ապահովված է: Ճիշտ և նպատակային համագործակցությունը կարելի է սկսել ընտանիքների ուսումնասիրությունից, որը հնարավորություն է տալիս լավ ճանաչելու երեխային, հասկանալու նրա ընտանեկան դրությունը, ճանաչելու նրա հոգևոր արժեքները, ծնողների ու երեխաների փոխհարաբերությունները և այլն:

Իհարկե, դպրոցի դերը շատ մեծ է երեխայի զարգացման ու դաստիարակության գործընթացում, այնուամենայնիվ, ընտանիքում է դրվում նրա զարգացման հիմքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Անհատի նկարագիրն աղճատող և էությունը խեղող առաջին պատճառը ընտանեկան ոչ առողջ միջավայրն է, որն իր բոլոր բացասական հետևանքներով կործանում է այնտեղ հասակ առնող երեխաների կյանքը:
- Ընտանիքում առողջ և դաստիարակված երեխա ձևավորելու համար ծնողները պետք է ստեղծեն հանգիստ, խաղաղ մթնոլորտ, հաստատեն բարի դրացիական հարաբերություններ ընտանիքի բոլոր անդամների հետ:
- Հնարավորինս հարկավոր է խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից և առաջացման դեպքում արագ լուծում տալ:
- Աշխատանքային լարվածության պարագայում միշտ և հնարավորինս շատ ուշադրություն դարձնել երեխային:
- Անմիջապես արձագանքել երեխայի մոտ թեկուզ չնչին բացասական վարքագծի դրսևորումներին:
- Մշակել ներընտանեկան խնդիրները լուծելու տարբերակներ և աննկատ կերպով երեխային ներգրավել այդ գործընթացում:
- Միշտ հարկավոր է երեխային զբաղեցնել հետաքրքիր ժամանցով և երբեք չաղավաղել նրա մանկական հիշողությունները:
- Ապահովել դպրոցի և ընտանիքի ճիշտ և նպատակային համագործակցությունը, խիստ վերահսկել երեխայի կրթությունը:
- Ծնողները մարդկային լավագույն արժեքների կրողներն ու օրինակը պետք է լինեն՝ օրինակ դառնալով իրենց զավակներին:
- Դպրոցում ավելի շատ սեր ու համբերություն, ավելի շատ սրտացավ վերաբերմունք ցուցաբերել երեխաների նկատմամբ:
- Հասարակության մեջ ինտեգրվելու և ստեղծագործ անհատ դաստիարակելու խնդիրը միշտ էլ արդիական է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 Սեդրակ Ս.Սեդրակյան, Ընտանիքի հոգեբանություն, Երևան 2010

2 Ա.Նալչաջյան, Ս. Մկրտչյան, Ընտանիքի հոգեբանություն, Երևան 2001

3 «Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր, Երևան 2008